ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF RA

ՆՈՐՔ ՏԵՂԵԿԱՏՎԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
NORK INFORMATION-ANALYTICAL CENTER CJSC

0069, ՀՀ, ք.Երեւան, Կ. Ուլնեցու 68
68 K. Ulnetsi str., Yerevan 0069, RA
Tel./fax: 24-75-62, 24-86-18

06 Փետրվար 2015թ. | No Ե2015-131

ԳԱԿ-ՇՀԾՁԲ -11/18 ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/18>> ծածկագրով ընթացակարգի շրջանակներում "Նորք" տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու <<Գնումների աջակցման կենտրոնի>> ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված <<ՇՀԾՁԲ-11/18- >> շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություններ:

Սույն հրավերի ծածկագիր է հանդիսանում -ՆՏՎԿ-ՇՀԾՁԲ-11/18-15/4:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ, ք. Երևան, Կ.Ուլնեցու 68 հասցեով, ֆինանսատնտեսագիտական և գնումների համակարգման բաժին, Հ. Դալլաքյանին' մինչև 2015թ. փետրվարի 18-ը ժամը 16:00-ն: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում' ըստ ստացման հերթականության' ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն Կ.Ուլնեցու 68 հասցեում, ֆինանսատնտեսագիտական և գնումների համակարգման բաժնում, 2015թ. փետրվարի 18-ին ժամը 16:00-ին: Գնման առարկա է հանդիսանում "Նորք" տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար' Երկու Կետերի Միջև Ուղիղ Կապուղու ծառայությունների ձեռքբերումը: Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված'

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/18 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

"Նորք" տեղեկատվավերլուծական կենտրոն ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ norq@norq.am:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները, նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցմամբ)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

**ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝** **Կ. ՍԱՐԳՍՅԱՆ**



Կատ՝ Ֆինանսատնտեսագիտական և գնումների համակարգման բաժնի
գնումների համակարգող՝ Հ.Դալլաքյան